ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
Ն-30

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
«21» մարտ 2023թ.
N Ն-30 (H-30) 2023
Ուժի մեջ է մինչև՝ «29» նոյեմբեր 2026 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին (Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի մարտի 21-ի N 532-Ա հրաման) համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 021/S-044) N 1-B հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրի, ցուցանիշների և արտադրանքի բնութագրերը և նորմերը սահմանող նորմատիվ իրավական ակտի, համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված նմուշառման մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի:

ՀՀ, ք. Երևան, Րաֆֆու 111

Էլ. հասցե; info@testsvyaz.am; Հեռ. (+374 11) 66-10-01

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում է ստորև ներկայացված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերը՝

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված «Ցածր լարման սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 004/2011),
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 823 որոշմամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 010/2011),
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անիվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 018/2011),
4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 879 որոշմամբ հաստատված «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 020/2011),
5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 20-ի N 60 որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 031/2012):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Կ.Տ.

4/7/2023

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

(ստորագրությունը)